ՀԱՍՏԱՏՈՒՄ Է՝
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ՝
ՊՐՈՖԵՍՈՐ ՄԻՀՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ
30.05.2025թ.

ԿԱՐՃԻՔ

Նելլի Գևորգի Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թթ.» Թ. 00.05 «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

2025 թ. մայիսի 30-ին տեղի ունեցավ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի նիստը, որին մասնակցում էին ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, պատմ. գիտ. դոկտորներ, պրոֆեսորներ Ա. Փիլիպոսյանը, Վ. Վիրաբյանը, Ս. Պողոսյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածուներ, դոցենտներ Է. Հովհաննիսյանը, Է. Մելքոնյանը, Ա. Եփրիկյանը, Մ. Եղյանը:

Քննարկվեց Նելլի Գևորգի Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թթ.» թեկնածուական ատենախոսությունը՝ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար:

Ելույթ ունեցան ատենախոսության գրախոսներ, պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ս. Պողոսյանը, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը, ովքեր հրապարակեցին իրենց գրավոր կարծիքները: Տեսակետներ արտահայտեցին պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Ա. Հարությունյանը, պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Է. Հովհաննիսյանը:

Քննարկման արդյունքներն ամփոփեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանը:

Կիլիկիայի հայկական պետության և Հայ առաքելական եկեղեցու փոխհարաբերությունների պատմության ուսումնասիրությունը չափազանց կարևոր է պատմագիտության տեսանկյունից: Հիմնահարցը տարբեր ժամանակաշրջաններում շատ հետազոտողների ուշադրության կենտրոնում է եղել, սակայն դեռևս կան բազմաթիվ անհայտ և չճշգրտված իրադարձություններ, վարկածներ, որոնց բացահայտումը արդիական, գիտական, տեսական, քաղաքական և ճանաչողական նշանակություն ունի:

Ուշագրավ է, որ հայկական եկեղեցու և պետության փոխհարաբերությունները դիտարկվել են Բյուզանդական կայսրության, Հռոմի պապական աթոռի և խաչակրաց ու մահմեդական պետությունների հետ հարաբերությունների համատեքստում:

Ատենախոսն իր առջև խնդիր է դրել պատմա-կրոնագիտական և եկեղեցագիտական փաստերի ու ժամանակակից գիտական գրականության օժանդակությամբ ներկայացնել Կիլիկիայի հայկական պետության և Հայոց եկեղեցու՝ 1166-1226 թթ. փոխհարաբերությունների պատմության մանրամասները, բացահայտել Հայոց եկեղեցու իրադրությունը 12-րդ դարի երկրորդ կեսերին և կաթողիկոսական աթոռի համար ծավալվող պայքարում պետական համակարգի միջամտության մանրամասները: Գիտական հետաքրքրություն են ներկայացնում Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի հարաբերությունները Բյուզանդիայի քաղկեդոնական քաղաքականության դեմ՝ 1166-1198 թվականներին և հայոց պետության աջակցությունը Հայ առաքելական եկեղեցուն և հայ հոգևորականներին վերաբերող լուսաբանումները: Հեղինակը վեր է հանել Կիլիկիայի հայոց պետության և Հռոմկլայի կաթողիկոսարանի հարաբերությունների մանրամասները Հռոմի կաթոլիկ եկեղեցու և պապական աթոռի դեմ պայքարում՝ 1166-1226 թվականներին, բացահայտել Հայոց եկեղեցու դերակատարումը պետական-քաղաքական կառավարման համակարգում, ցույց տվել Հռոմկլայի կաթողիկոսարանի և Կիլիկիայի հայկական պետությանն բաժին հասած մարտահրավերները 12-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1226 թվականը, և

նրանց համատեղ պայքարը, հայ բարձրաստիճան հոգևորականության վարած դիվանագիտական գործունեությունը և դրանց արդյունքները պետականության ստեղծման և երկրի զարգացման գործում:

Ատենախոսը ներկայացրել է նաև Հայոց եկեղեցու և առանձին հոգևորականների դերակատարումը Կիլիկիայի հայոց պետության քաղաքական-կառավարման ոլորտում, կարևորել Հռոմկլայի կաթողիկոսարանի ու Կիլիկիայի հայոց պետության խաղացած վիթխարի դերը հայկական մշակույթի տարբեր բնագավառների և հատկապես Արծաթե դարի ստեղծման գործում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, որոնք էլ իրենց հերթին բաժանվում են ենթագլուխների, եզրակացություններից, օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության ցանկից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 155 էջ:

Թեկնածուական ատենախոսությունն ունի հետևյալ գիտական նորույթները՝

1. Առաջին անգամ քննվել է Կիլիկիայի հայկական պետության և Հռոմկլայի հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունների պատմության մի մեծ ժամանակաշրջան՝ 1166-1226 թվականների ժամանակահատվածը՝ իր բոլոր դրսևորումներով:
2. Ատենախոսության մեջ օգտագործվել են մի շարք անտիպ ձեռագրեր:
3. Ճշտվել են ժամանակագրական մի շարք վիճելի հարցեր, տարբեր եկեղեցաժողովներում կայացրած կարևոր որոշումները:
4. Կարևոր ճշգրտումներ են կատարվել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի գահակալման, Գրիգոր Ե Քարավեժի մահվան հանգամանքների, Լևոն արքայի և կաթողիկոս Հովհաննես Սսեցու հարաբերությունների բարդացման, ինչպես նաև մի շարք այլ կարևոր իրադարձությունների մանրամասները:
5. Ի հայտ են բերվել Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման գործում հայ հոգևորականության խաղացած դերի մանրամասները:
6. Հանգամանալից հետազոտվել են հայ-բաղկեդոնական եկեղեցաքաղաքական հարաբերությունների մանրամասները և վեր հանվել մի շարք չպարզաբանված ու կնճռոտ խնդիրներ:

7. Երևան են հանվել հայ-կաթոլիկ եկեղեցական հարաբերությունները, դրանց մանրամասները, Հռոմի կաթոլիկ եկեղեցու ունեցած դերը Կիլիկիայի հայկական թագավորության հռչակման և Լևոն Մեծագործի թագադրման գործում:
8. Շեշտադրվել և ներկայացվել են մանրամասներ Հայոց կաթողիկոսի ու հայ բարձրաստիճան հոգևորականության խաղացած կարևոր դերակատարումը՝ Կիլիկիայում Հեթումյանների հարստության հիմնադրման գործում:
9. Լուսաբանվել է Հռոմկլայի կաթողիկոսարանի և ընդհանրապես Կիլիկյան Հայաստանի հոգևորականության դերակատարումը հայոց պետության պետական-քաղաքական կառավարման ոլորտում:

Բարձր գնահատելով կատարված աշխատանքը, կցանկանայինք ներկայացնել մի շարք նկատառումներ.

- Ներածության մեջ (էջ 12) հեղինակների մի մասի անուններն են նշված, մի մասի՝ անվան առաջին տառը՝ «Վ. Լանգլոայի, Ֆ. Տուրնեբիզի, Ռենե Գրուսեի, Ս. Ռենսիմանի, Ժ. Ռիշարի, Պետեր Հալֆտերի, Բ. Համիլթոնի»: Կարծում ենք, միանմանություն պետք է լինի:
- Էջ 15-ում առկա է վրիպակ. Պետեր Հալֆտերի անունն է գրված և ազգանվան առաջին տառը:
- Էջ 33-ում ատենախոսը նշել է, որ «Մոտ 1169 թվականին մահացավ Կիլիկիայի իշխանապետ Թորոս Բ-ն, ում դուստրն ամուսնացած էր Լամբրոնի Օշին իշխանի անդրանիկ որդի՝ Հեթումի հետ: Այս ամուսնությունը, ամենայն հավանականությամբ, սիրո ամուսնություն չի եղել, այլ քաղաքական»: Մեր կարծիքով սիրո ամուսնություններ միջնադարյան տիրակալների և իշխանների մոտ հիմնականում չէին լինում:
- Ատենախոսության գիտական ղեկավարը՝ պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ Ա. Հովհաննիսյանը, բազմաթիվ աշխատություններ ունի տվյալ թեմային վերաբերող (Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թվականներին, Երևան, 2008, Հայոց եկեղեցին Կիլիկյան շրջանում, Երևան, 2018, Մլեհ Ռուբինյան. Իշխանապետ Կիլիկիո հայոց, Երևան, 2022, Պետության և եկեղեցու

հարաբերությունները Լևոն Մեծագործի կառավարման ժամանակաշրջանում, Տարեգիրք աստվածաբանության ֆակուլտետի, Երևան, 2009, Մեծ իշխան Մլեհի եկեղեցական քաղաքականության շուրջ, «Բազմավէպ» հանդես, 2013, թիւ 3-4, Լևոն Մեծագործի և Լամբրոնի Հեթումյանների հարաբերությունների պատմությունից, Տարեգիրք աստվածաբանության ֆակուլտետի, Երևան, 2014, Մի դրվագ Մլեհ իշխանապետի և Ռուբեն Բ-ի հարաբերությունների պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 2021, թ. 1 (33), Լևոն Մեծագործի և Գրիգոր Քարավեժի հարաբերությունների պատմությունից (12-րդ դարի 90-ական թվականներ), «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Երևան, 2019) և ցանկալի է հասկանալ արդյոք հեղինակը գիտական նոր խոսք կամ տարբերվող տեսակետ ունի վերոնշյալ հիմնահարցերի վերաբերյալ և որոնք են դրանք:

- Կարծում ենք, որ Ներսես Շնորհալու մահը պետք է ներկայացվեր ոչ թե առաջին գլխի Գ ենթագլխի վերջում, այլ՝ Դ, քանի որ այստեղ նույնպես Ն. Շնորհալու գործունեությունն է ներկայացվում:
- Երկրորդ գլխի Ե ենթագլուխը՝ «Եկեղեցական նորամուծությունների հարցը և Լևոն Մեծագործը» կարելի էր վերնագրել «Լևոն Մեծագործի և Ներսես Լամբրոնացու հարաբերությունները», քանի որ եկեղեցու նորամուծություններից միայն Լամբրոնացու թույլատրած երրորդ անգամ ամուսնանալու խնդիրն է ներկայացվել:
- էջ 99-ում առկա է հետևյալ միտքը. «թեև հռոմեական եկեղեցու միջոցով ձեռք բերեցին թագավորության անուն և փառք, սակայն երես թեքեցին կաթոլիկներից՝ հետ խլելով այն հողերն ու վանքերը, որ տվել էին կաթոլիկ հոգևորականությանը: Նշյալ հարցին անդրադառնում է նաև Տուրնեբիզը և նշում, որ 1203 թվականին Հայոց արքան բռնագրավեց Կիլիկիայում տաճարականներին հատկացված ավատական տիրույթներն ու նրանց վտարեց երկրից»: Սակայն հայտնի է, որ տաճարականներից հողերի բռնագրավումը պայմանավորված էր Անտիոքի համար պայքարում նրանց աջակցությամբ Բոհեմունդ Միակնանուն:

- Աշխատանքում ցանկալի կլիներ տեսնել հայոց պետությանը տրամադրվող հայ հոգևոր հաստատությունների զինվորների թվաքանակը:
- էջ 108-ում 1213 թ. իրադարձությունների հետ կապված սխալ միտք կա. «Հայոց թագավորը չի ցանկացել ամբողջովին կտրել կապը հույն եկեղեցու և Բյուզանդական կայսրության հետ, որոնք հարևան էին Կիլիկիայի հայկական թագավորությանը»: Այդ շրջանում Բյուզանդիան այլևս սահմանակից չէր Կիլիկիային:
- էջ 108-ում Տարսոնի լատին եկեղեցու հողերը հույներին հանձնելու փաստը (1213 թ.) կարելի է քննել նաև հունադավան Ատան պայլի գործոնով, ով Լևոնի մերձավորագույն զինակիցն էր:
- էջ 128 – «կաթողիկոս Հովհաննես Սսեցուն նույնպես վիճակված չէր երկար լինել Զաբելի խնամակալի կարգավիճակում, քանզի մոտավորապես 1220 թվականին նա մահացավ և թաղվեց Դրազարկում»: Ատան պայլը սպանվել է 1221 թ., իսկ Հովհաննես Սսեցին՝ հավանաբար 1221 թ. մայիսի 2-ին: Նրա մահը չէր կարող 1221 թ.-ից՝ Ատանի սպանությունից առաջ լինել:
- Հեղինակի ուշադրությունից վրիպել է այն փաստը, որ 1176 թ. հայտնի ճակատամարտի տեղանունը թե ատենախոսությունում, թե սեղմագրում տարբեր կերպ է ներկայացվել: Այսպես, Միրիոկեֆալոնի փոխարեն նշվում է Միրեոկեֆալոն, Միրիեկեֆալոն /տես ատենախոսության 53-րդ և 55-րդ էջերը/, Միրիկեֆալոն /տես սեղմագրի 14-րդ էջը/:
- Անհասկանալի է նաև Գ. Միքայելյանի արժեքավոր աշխատության և ռուսերեն /Երևան, 1952 թ./ և հայերեն /Երևան, 2007 թ./հրատարակությունների հիշատակումը: Մեր կարծիքով հարկավոր էր ընտրել դրանցից մեկը:

Անտարակույս, նշված դիտողություններն ու ցանկությունները ավելի կատարյալ գիտական աշխատանք ունենալու նպատակ են հետապնդում, չեն նսեմացնում հեղինակի կատարած աշխատանքը: Նելլի Գևորգի Ժամկոչյանի «Պետություն-եկեղեցի հարաբերությունները Կիլիկյան Հայաստանում 1166-1226 թվականներին» ուսումնասիրությունը պարունակում է գիտական նորույթ, համապատասխանում է Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ներկայացվող պահանջներին և պատրաստ է հրապարակային պաշտպանության: Հեղինակն էլ արժանի է իր իսկ

հայցած պատմական գիտությունների թեկնածուի Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն» մասնագիտությամբ գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատված է ամբիոնի 2025 թ. մայիսի 30-ի նիստում /արձանագրություն թիվ 15/:

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայոց պատմության

ամբիոնի վարիչի պաշտ.՝ պրոֆ. Է. Գևորգյան

Պատմ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր Է. Գևորգյանի

ստորագրությունը հաստատում եմ:

ՀՊՄՀ գիտ. քարտուղար՝ դոց. Մ. Իսպիրյան

30.05.2025 թ.